

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՈՎ ԴԵՐԱՆՎԱՄԲ ԿԱՊԱԿՑՎՈՂ ՈՐՈՇԻՉ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բանասիր. գիտ. թեկնածու Ա. Մ. ՍԱՆԹՈՅԱՆ

Վերջին տարիներին՝ սկզբում հեռուստատեսությամբ, մամուլում, սոցցանցերում, արդեն նաև գիտական և գեղարվեստական երկերում մեծ տարածում է ստանում որոշիչ երկրորդական նախադասությունների՝ *ով դերանվամբ կապակցումը գլխավոր նախադասությանը, եթե լրացյալը անձնանիշ գոյական է, ինչպես՝ Մի ուրիշ վրանգ էլ է տեսնում Հովհաննես Չեքիջյանը, ով իր ղեկավարած երգչախմբի համար ցանկանում է երգիչներ հրավիրել* («Ազգ», 2006. 01. 20): Հայաստանյան այս համերգի գաղափարն էլ Վաչեին է, ով ամիսներ առաջ իմ որոշ ստեղծագործություններ ներկայացրեց Զավեն Վարդանյանին («Առավոտ», 2008. 07. 20):

Այսպես գրում են (խոսում են) մարդիկ, որոնք այդպես չեն գրել (խոսել) կամ էլ իրավունք չունեն այդպես գրելու (խոսելու):

Անձնանիշ լրացյալին *ով* դերանվամբ որոշիչ երկրորդական կապակցելու կողմնակիցները, ըստ իմ կատարած հարցումների, բերում են հետևյալ փաստարկը. քանի որ գլխավոր նախադասության լրացյալը անձնանիշ գոյական է, իսկ *ով* դերանունն էլ անձ է ցույց տալիս, ուրեմն երկրորդականը պետք է կապակցել *ով* դերանվամբ:

Լավ հասկանալով, իհարկե, որ լեզուն զարգացող ու փոփոխվող համակարգ է, և լեզվական այս նոր կաղապարն էլ կարող է լինել այդ փոփոխությունների հետևանք, ամենևին էլ հակված չենք հարցը միայն պահպանողական դիրքերից դիտարկելու և անվերապահորեն մերժելու: Բայց հակված էլ չենք անվերապահորեն ընդունելու՝ լավ հասկանալով նաև, որ ամեն նոր բան չէ, որ պետք է լուռ և կույր ընդունելության արժանանա, հատկապես եթե այդ նորը հակասում է հայերենի օրենքներին ու օրինաչափություններին⁶:

⁶ Հիշենք մեր օրերի մի քանի «նորույթներ». *ինքը* դերանվան կիրառությունը առարկաների փոխարեն, ինչպես՝ *Ինքը* լավ սուրճ է: Կամ *հանդիսանալ* բայի կիրառությունը եմ բայի փոխարեն, ինչպես՝ Նա *հանդիսանում է* տարածաշրջանի գործակալության տնօրենը: Սրանք մերժելի են ոչ թե նրա համար, որ «նոր» են, այլ որովհետև հայերենին խորթ են, հայերեն չեն:

Առաջին հայացքից ճիշտ թվացող այս իրողությունը⁷ խորքային ուսումնասիրության ժամանակ ի հայտ է բերում բազմաթիվ հակասություններ, սխալներ և անհարմարություններ:

Հայ լեզվաբաններից *ով* դերանունով որոշիչ երկրորդական նախադասության կապակցման կողմնակիցներ են Մ. Աբեղյանը («Վերադիր խոսքերը կապակցվում են *որ, ով (որ), ինչ (որ), որը որ* հարաբերականներով»⁸) և Գ. Գարեգինյանը («*Այն – ով* կապակցական կաղապարով տարբերակվում և բնորոշվում են անձ ցույց տվող գոյականները, ինչպես՝ Մեր կոմպոզիտորները երախտագիտությամբ և խորին հարգանքով են հիշում *այն արվեստագետների անունները, ովքեր* չվերադարձան ռազմաճակատից (ընդգծումները բնագրում – Ա. Ս.)»⁹:

Ստ. Պալասանյանը, Բ. Վերդյանը, Գ. Զահուկյանը, Ս. Աբրահամյանը որոշիչ երկրորդականների կապակցման միջոց են համարում *որ, որպեսզի, ուր, երբ, ինչպիսի, որպիսի, ինչ* դերանունները, *որ, թե* շաղկապները¹⁰:

Վ. Առաքելյանը գրում է, որ *ով* դերանվամբ որոշիչ երկրորդական նախադասություն կազմելը հատուկ չէ գրական լեզվին: Ավելին, Մ.

⁷ Լեզվական այս կաղապարի տարածման պատճառը անգլերենի ազդեցությունն է, որտեղ երկրորդական նախադասությունը գլխավորի անձնանիշ յուզալիին կապակցվում է *ով* դերանունով, ինչպես՝ *The two sisters lust for Edmund, who has made promises to both* (William Shakespeare, *King Lear*). Այս անգամ ևս ռուսերենը կապ չունի. եթե ունենար, ապա խորհրդային տարիներին ևս կլիներ նման գործածություն: Մեր օրերի անգլիախոսներն ու անգլիագետները ուղղակի սկսեցին գործածել լեզվական այս կաղապարը: Երկրորդ պատճառն էլ կարող էր լինել հետևյալը. եթե գլխավոր նախադասության լրացյալը տեղանիշ կամ ժամանականիշ (տեղ կամ ժամանակ ցույց տվող) գոյական է լինում, կապակցումը կատարվում է *որպեսզի, երբ* հարաբերականներով: Համաբանությամբ էլ անձնանիշ գոյական լրացյալի դեպքում երկրորդական նախադասության կապակցումը կարող էր կատարվել *ով* դերանվամբ: Բայց դա այդպես չէ, քանի որ լեզվական այս կաղապարի տարածումը համընկնում է վերջին տարիներին նկատելի անգլերենի ազդեցության մեծացմանը: Այսպես, ԱՐԵՎԱԿ – ում որոնումները հաստատում են, որ հանդիպող օրինակների գերակշիռ մասը մամուլից է:

⁸ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 610:

⁹ Գ. Գարեգինյան, Ժամանակակից հայոց լեզու: Բարդ նախադասություն, Ե., 1991, էջ 162: Բերված օրինակը մամուլից է, մյուս օրինակը՝ թարգմանական գրականությունից. Գնացե՛ք: Եվ մի լավ ստուգեցե՛ք այն մարդկանց, *ովքեր* հրամցրել են ձեզ այդ կեղծիքը (տե՛ս նույն տեղում):

¹⁰ Տե՛ս Սյր. Պալասանյան, Քերականութիւն մայրենի լեզուի (մասն Ա. Բ. Գ.), Թիֆլիս, 1906, էջ 225-226: Բ. Վերդյան, Բարդ ստորադասական նախադասության շարահյուսություն, Ե., 1970, էջ 135: Գ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 541-542: Ս. Աբրահամյան և այլք, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Շարահյուսություն, Ե., 1976, էջ 630: Ս. Աբրահամյան և այլք, Հայոց լեզու, 2-րդ մաս, Շարահյուսություն, Ե., 2004, էջ 152:

Աբեղյանի բերած օրինակները (Այն մարդը մարդ չէ, *ով որ* կեղծավորությամբ խոսի: Սուրբ Գևորգն ամեն մարդկանց էլ, *ով* նրա դուռը գա, օգնության կհասնի: Ջալալեդդինը երազ է տեսել, որ աստված կպատժի այն քրդին, *ով որ* յուր մաքիներից ամենալավերը՝ հնգից մեկը չուղարկի շեյխի տուն) համարում է հնացած և բարբառային¹¹:

«Որոշիչ երկրորդական նախադասություններ ներմուծող ամենից ավելի ընդհանրական դերանունը *որ-ն* է, - գրում է Գ. Ջահուկյանը: - Ժամանակակից հայերենում այն հանդես է գալիս շարահյուսական հետևյալ հատկանիշներով. 1) *որ-ը* թվով սովորաբար համաձայնում է հարաբերյալի հետ. հմմտ. «Այն մարդիկ (մարդկանց, մարդկանցից), *որոնք* (*որոնցից, որոնցով*)....» 2) *որ-ը* դրվում է այն հոլովով, որ որոշվում է երկրորդական նախադասության մեջ նրա կատարած դերով կամ խնդրառական պահանջով. հմմտ. «Այն մարդիկ, *որոնցից* երեխաները սովորելու ոչ մի բան չունեն....», «Այն մարդիկ, *որոնցով* թատրոնները լցված են....»¹²:

Որոշիչ երկրորդականների՝ *ով* դերանվամբ կապակցումը անձնանիշ լրացյալին մերժելի է և սխալ հետևյալ պատճառներով:

1. Նախ՝ ճիշտ չէ պատմականորեն: Գրական երկերից քաղված հարյուրավոր օրինակները ցույց են տալիս, որ դեռևս 5-րդ դարից օրինաչափ էր անձնանիշ գոյականներին լրացնող որոշիչ երկրորդականները կապակցել *որ* դերանվամբ¹³: Օրինակ՝ Հայր մեր, *որ* յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո.... (Մատթ., 2, 9): Նրա մասին լսեց մի կին, *որի* դուստրը տառապում էր պիղծ հոգուց (Մարկ., Է, 25): Հրեաստանի Հերովդես թագաւորի օրով, Աբիայի դասից Ջաքարիա անունով մի քահանայ կար, *որի* կինը Ահարոնի դստերից էր (Ղուկ., Ա, 5): Եկել էր ճոճկանեցի Խուդին, *որ* ասլանի սիրտ ուներ, գյուլլուբաղցի Դոնդուզ Ղռանը, *որ* լեզգու արյուն էր խմում, արդվեցի լեզգի Պետոն, *որ* մազը մազից ջոկում էր գյուլլով, սանահնեցի Արուֆինը, *որ* ձին աստղերի հետ էր խաղացնում, վիթխարի Վերանը, հաղպատեցի աժդահա Պրանը և ուրիշ անվանի քաջ մարդիկ (ՀԹ): Եվ ահա այսօր մեռնում է ... տոկուն

¹¹ Տե՛ս Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, Ե., 1964, էջ 136:

¹² Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 542-543:

¹³ Օրինակները քաղել ենք հայ պատմիչների և գրողների երկերից (Հ. Թումանյան, Ե. Չարենց, Ավ. Իսահակյան, Նար-Դոս, Պ. Սևակ, Դ. Դեմիրճյան, Շիրվանզադե, Ստ. Զորյան, Հր. Մաթևոսյան և այլք): Օրինակների որոնմանը աջակցել են Վանաձորի պետական համալսարանի բանասիրության և մանկավարժության ֆակուլտետների բակալավրիատի 2012-2017 թթ. 2-3-րդ կուրսերի ուսանողները:

վաճառականը, որ ամբողջ կյանքն անց է կացրել անդուլ գործունեությանը (Շիրվ.): Այդ տխուր մտմտութից հանեց Վաչագանին նրա մայրը՝ Աշխեն թագուհին, որ այդ պահուն մոտեցավ նրան (ՂԱ): Հաբուդը, որ մի կտոր շիկացած ածուխ էր դարձել, խանձում էր սիրտը (ԱԲ): Մարգպետունի իշխանուհին, որ մայրական խնդով լցված նայում էր որդուն, նրա վերջին խոսքից հրճվեցավ (Մ): Ահա այդ նամակը պետք էր հասցնել գեներալ Տեր-Ղուկասովին, որը մեզանից շատ հեռու չէր գտնվում (Բ): Տիկին Ոսկին, որ աննկատելի չքացել էր քիչ առաջ, այժմ պտտվում էր հացի սեղանի շուրջը (Ստ2): Նազելին, որ դեռ տառեր չէր ճանաչում, ինչ-որ վատ բան կարդաց եղբոր վերաբերմունքի մեջ (ԱՍ): Գովերգում եմ ես այն մորը, որը ծնում և չի հոգնում (ՊՍ): Դեռ հեռվից զինվորներ տեսավ, որոնք իրենց բակում իրար քաշքշում, իրարից բան էին խլում (Շ): Ամբողջ մի ամիս խումբը զինավառ / Սարեր ու ձորեր ոտնատակ տվեց / Չոբան Սարոյին գտնելու համար, / Որ սարից իջավ, / Անուշին փախցրեց (ՀԹ): Ճանապարհին Արտյուրը ներկայացրեց իրեն իբրև արդեն քաջահռչակ, խաչակից Լանսելոյի, որի համբավը լսել էր ամեն ականջ (ԱԻ): Ադամ, որ հեռուն կանգնած՝ հափշտակված դիտում էր իր ընկերին, մեկեն սիրտ առավ մոտենալու նրան (ԱԻ): Շմավոնի տղան՝ ութ տարեկան Կարոն, որ ներս էր եկել և հետևում էր նրանց խոսակցության, բացատրեց (ԴԴ): Դա Հաճի աղայի անդամալույծ քույրն էր՝ Սրբունը, որ ամուսնու մահից հետո անդամալույծ եղավ (ԴԴ): Պատրաստություններ էին տեսնվում պատվելու այն մարդուն, որին ատում էր ինքը, որի թշնամին էր, որը այսօր պիտի գար գտնելու մի գերի, որի մահն էր ցանկանում ինքը (Բ):

Այլ կերպ ասած՝ գրավոր հայերենում ի սկզբանե, սկսած Աստվածաշնչի թարգմանություններից, ձևավորվել է որոշիչ երկրորդականը գոյական լրացյալին կապակցելու կայուն միջոց՝ որ դերանունը¹⁴: Այդպես գրել են 1500-ից ավելի տարիներ բոլորն անխտիր, և ոչ ոք չի կասկածել ու չի փորձել փոխել այդ կաղապարը:

¹⁴ Եզակի օրինակներ են հանդիպում, որոնցում որոշիչ երկրորդականը անձնանիշ գոյականին կապակցվել է ով դերանունով, ինչպես՝ *Այն գրողի մասին է սա գրված, ով կարդալիս իմ դեմ հուզվի ու փրփրի (Ն2): Պարապում էր նա մի տեսակ վաճառականությանը, ով ավելի կանանց է հափուկ (Բ):* Բացահայտ սխալ ու անհասկանալի կիրառություն է: *Այդ տանը տեղ ազգայի պողավոր մեկի համար, ով այդ տունը կլցներ երեխաների փափուկ լացերով (ՀՄ): Ֆարրաշները իրենց ձեռքի վարոցներով գանակոծում էին հանդիպողին, ով որ փոքր-ինչ ուշ էր շարժվում և ճանապարհ չէր բացում (Բ):* Վերջին օրինակներում լրացյալի դերում են բառեր (մեկը, հանդիպողին), որոնք անձ են ենթադրում:

Գոյականներից թերևս բացառություն է *մարդ* բառը, որի հետ *ով* (*ովքեր*) դերանունը որպես կապակցող միջոց կարելի է կիրառել: Դա պայմանավորված է նրանով, որ *մարդ* բառով նախադասությունները ոճական առումով (բայց ոչ կառուցվածքով) համադրելի են միակազմ նախադասություններին: Դրանցում *մարդ* բառը ընդհանրական նշանակություն է ստանում՝ հարելով որոշյալ դերանուններին¹⁵: Օրինակ՝ Իմացած եղեք, որ ամեն *մարդ*, *ով* բնակվում է երկնքի տակ և չունի դենիմազդեզն կրոնը, խուլ է և կույր (Եղիշե): Եվ ամեն *մարդ*, *ով* որ կտեսնե քո փառավորությունը, երանի կտա քո ծնողներին (Րաֆֆի): Եվ այդ պատճառով Հունոն աչքի փուշ է դառել երկրի վրա աչք ունեցողների համար, իսկ հիմար կլինի էն *մարդը*, *ով* փուշը կթողա իր աչքումը ցցված և չի աշխատիլ հանել ու կրակ տալ (Պոռշյան): Սրիկա և վախկոտ է այն *մարդը*, *ով* չի խմում իմ քրոջ աղջկա կենացը այնպես, որ նրա ուղեղը խմելուց հոլի պես դառնա (Շեքսպիր): Թըռի՛ր, գարշելի դու նվաստություն, Դեպի այն *մարդը*, *ով* պաշտում է քեզ (Շեքսպիր):

Այնուամենայնիվ ճիշտ են ու նախընտրելի *մարդ*, *որ*, *մարդիկ*, *որ* (*որոնք*) կաղապարները, ինչպես՝ Մարդիկ, որ մարդ չեն, այլ ավելի շուտ մարդակերպ կապիկ (ՊՍ): Ու հայրիկի առջև կանգնած էր *մարդը*, *որ* ամեն ինչ կորցրել էր ու ոչինչ չէր ուզում (ՀԹ):

2. Հարցահարաբերական դերանունները անձ կամ առարկա են ցույց տալիս բացարձակ անորոշ կերպով: Դրանք, նախադասություն կապելով, անձնանիշ գոյական լրացյալ ունենալով, պարզապես հստակեցնում, վերհանում են նրա (այդ առարկայի) ինչ-որ մի կողմ, անհայտ կողմ: Եվ քանի որ այդ լրացյալ առարկան արդեն հայտնի է, ուստի և *ով* դերանվան միջոցով երկրորդականի կապակցություն սպասելի չէ: Չի կարելի ասել՝ Նախարարը, *ով* ծնվել էր այդ գյուղում, այցելեց դպրոց: Երկրորդական նախադասությամբ պարզաբանվում է *արդեն հայտնի մի անձի* (տվյալ դեպքում նախարարի) հատկանիշներից մեկը, այն է՝ որ նա ծնվել է այդ գյուղում: Ո՞վ հարցին կպատասխանի *նախարար*-ը (ո՞վ այցելեց՝ նախարարը), իսկ *ո՞ր նախարարը* հարցին՝ երկրորդական

¹⁵ Ս. Գյուլբուդաղյանը հնարավոր է համարում *մարդ* բառով ընդհանրական աննշանակա նախադասություններ կազմելը, քանի որ նկատի է առնվում մարդն ընդհանրապես, այլ ոչ թե ինչ-որ անորոշ մարդիկ: Տե՛ս Ս. Գյուլբուդաղյան, Միակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում, Ե., 1967, էջ 88: Տեսակետն, իհարկե, մերժելի է, քանի որ իմաստային-տրամաբանական համարժեքությունը չի կարող կառուցվածքային նույնության փաստարկ լինել, իսկ նախադասության միակազմ կամ երկկազմ լինելը կառուցվածքի հարց է: Տե՛ս Ս. Գ. Աբրահամյան և այլք, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, էջ 482 (ավելի մանրամասն՝ էջ 482-484):

նախադասությունը (որ ծնվել է այդ գյուղում): Դժվար թե գտնվի մեկը, որ հարց տա՝ *ո՞վ նախարարը*: Հմմտ. նաև հետևյալ նախադասությունը. Այստեղ ճիշտ է Ք. Ահրիմանը, *ըստ որի*¹⁶ օղակը եղել է իշխանության խորհրդանիշ: *Ըստ* կապի պահանջով կապվող բառը *որ* դերանունն է (և ոչ թե *ով*-ը), չնայած դերանունը փոխարինում է անձնանիշ գոյականի:

3. Եթե անձնանիշ գոյական լրացյալի հետ *ով* դերանվամբ կապակցումը ճիշտ լիներ, ապա նմանատիպ կապակցում սպասելի պիտի լիներ նաև անձնական դերանունների դեպքում: Մինչդեռ անձնական դերանուն լրացյալներին երկրորդականը կապակցվում է *որ* դերանվամբ, ինչպես՝ *ես, որ* մի զարկով կարող եմ հազար շունչ կենդանի ջարդել, ի՞նչ եմ էս անպիտան կնկա կողքին վեր ընկել (*ՀԹ*): Էն ժամանակ աստված գիտի՝ / Ով մեզանից կլինի փոշման, / *Մենք, որ* կելնենք ահեղ մարտի, / *Թե դուք, որ* մեզ արիք դուշման (*ՀԹ*): *Դու, որ* սայթաքել ու վայր ես ընկել, / Ընկել ես, սակայն երբեք չես ծնկել (*ՊՍ*): Ուրիշի լեզուն կտրելուց առաջ պիտի կտրեիր քո լեզուն, քանի որ *դու ինքդ, որ* քո ամենահավատարիմ ու անդավաճան ընկերն ես, չես կարողացել քո գաղտնիքը պահել (*ԱԻ*):

Թվում է, թե *նա* անձնական դերանվանը երկրորդականը կարող է կապակցվել *ով* դերանվամբ: Սակայն քանի որ առաջին և երկրորդ դեմքերի դերանուններին երկրորդականները կապակցվում են *որ* դերանվամբ, երրորդ դեմքի դերանուններն էլ բացառություն չեն կարող լինել, ու նրանց ևս լրացյալ երկրորդականը նույնպես կապակցվում է *որ*-ով:

Ի դեպ, այստեղից բխում է նաև հետևյալը. *նա, որ* կապակցություններում *նա* դերանունը հարաբերյալ չէ (ինչպես *ես, դու, մենք* և մյուս անձնական դերանունները), պարզ նախադասության փոխակերպելիս պահպանվում է, երկրորդական նախադասությունն էլ բացահայտիչ է: Հմմտ. *Նա, որ* նստում էր իմ կողքին, հեռացվեց – *Նա*՝ իմ կողքին նստողը, հեռացվեց: Ադամ խելքը կորցրած փովեց Լիլիթի ոտքերի տակ և ապշած դիտում էր *նրան, որը* քնքուշ մատները խրելով զամբյուղի մեջ, խաղում էր գոհարների հետ (*ԱԻ*): Ով *դուք, որ* գալու եք վաղը կառուցելու այստեղ (*ԵԶ*):

Ինչ վերաբերում է *նա, ով* կապակցությանը, այստեղ մենք գործ ունենք *նա* ցուցական դերանվան հետ. ուստի և *նա*-ն հարաբերյալ է և պարզ նախադասության փոխակերպելիս չի պահպանվում: Հմմտ. *Նա, ով* ելել է շալակն աշխարհի – Աշխարհի շալակը ելածը¹⁶:

¹⁶ Հմմտ. Գ. Գարեգինյան, նշվ. աշխ., էջ 179-182: Այստեղ հեղինակը հիմնավորում է *ես, որ / դու, որ / մենք, որ / դուք, որ* կապակցություններում *որ* բառի դերանուն և ոչ թե

Այսպիսով՝ քանի որ անձնական դերանունների հետ երկրորդական նախադասությունները չեն կապակցվում *ով* դերանվամբ (այլ ձևակերպմամբ՝ անձնանշությունը առանձնահատուկ կարևորություն չունի, էական չէ), ուստի և անձնանիշ գոյականների հետ էլ երկրորդականի՝ *ով* դերանվամբ կապակցվելու անհրաժեշտություն չկա¹⁷:

4. Մյուս անհարմարությունն այն է, որ *ով* դերանունը հոդ չի ստանում ու հոգնակի թվում էլ չի հոլովվում. դա լրացուցիչ դժվարություններ ու խոչընդոտներ է ստեղծում հոգնակի լրացյալի հետ հատկապես հոլովական համաձայնության կամ խնդրառական պահանջների դեպքում: Օրինակ՝ *Տեսա մարդկանց, որոնց (ո՛ւմ) չէի սպասում տեսնել այդտեղ: Տղամարդիկ, որոնց մեջ են Հակոբն ու Շմավոնը, վերադարձան տեր լինելու իրենց այրված ու կողոպտված գույքերին (ԴԴ): Նրա երիտասարդության ժամանակ բերել տվեց խանը և պահում էր իր սազանդարների մեջ, որոնց իր մոտից չէր հեռացնում (Բ): Դրանք նույնպես գյուղացիներ էին, որոնց ոչխարները գողացել էին (Բ):*

5. *Ով* դերանվամբ որոշիչ երկրորդական կապակցվելու անհնարինություն կառաջանա այն դեպքերում, երբ երկրորդականը լրացնի գլխավոր նախադասության տարբեր՝ անձնանիշ և ոչ անձնանիշ (իրանիշ) լրացյալների:

շաղկապ լինելը: Հիմնավորումը կատարվում է այս շարքերը *նա, որ(ը) – նրանք, որոնք* կապակցություններով լրացնելով, որից էլ բխում է հենց *որ* բառի՝ դերանուն, իսկ *նա* բառի անձնական դերանուն լինելը:

¹⁷ Առհասարակ անձնական և ցուցական *նա* դերանունների տարբերակումը հաճախ անհնարին, ուրեմն և իզուր գործ է: Հմմտ. «*Նա* դերանվան՝ իր կամ անձ ցույց տալը շատ հաճախ հնարավոր չէ որոշել նույնիսկ նախադասության մեջ: *Նա* (մարդը, գնացքը, ավտոմեքենան) հեռացավ կայարանից: *Նա* (երեխան, շաակը, քամին) սուլում է: *Նրանից* (Աշոտից, լճից, քաղաքից) հեռու ենք *Նա* դերանվան առարկայական վերաբերությունը որոշելու համար նման դեպքերում անհրաժեշտ է լինում նկատի ունենալ մի քանի նախադասությունների ամբողջությունը կամ նույնիսկ ամբողջ խոսքը» (Ս.Գ. Աբրահամյան, Անձնական և ցուցական *նա* դերանվան տարբերակումը // «Սովետական մանկավարժ», 1959, 3, էջ 61-64):

Սակայն նկատենք, որ և՛ անձնական, և՛ ցուցական դերանունները կարող են մատնացույց անել թե՛ անձ և թե՛ ոչ անձ (առարկա): Հմմտ. Ծիտը գնում է ետ գալի, թե՛ փուշը ետ տուր *ինձ*: *Սրանք* էլ իմ ընկերներն են: Ստեղծեց *նրան* [Մարդուն], որ սա սքանչանա իր վեհ գործերի վրա և փառավորե աստվածային անունը (ԱԻ): Հարևանի կինը, որ լուռ ականջ էր դնում *սրանց*, դիմեց Հաճի աղային (ԴԴ): Ո՛վ անդարձ հեռացողներ, / Ո՛վ մեռյալներ, / *Դուք*, որ չեք վերադառնալու այլևս և մնալու եք հար (եՁ): Իսկ *նա* դերանունը, որ ի սկզբանե ցուցական է եղել և աստիճանաբար ձեռք է բերել անձնականի գործառույթ, միաժամանակ համատեղում է թե՛ դիմային հարաբերություն, որ բնորոշ է անձնական դերանվանը, և թե՛ տարածական հարաբերություն, որ բնորոշ է ցուցական դերանվանը:

Դիցուք, ճիշտ է՝ Լրագրողը, *ով* գտնվում էր հրապարակում, թըջվեց նախադասությունը: Իսկ ի՞նչ անել՝ Լրագրողը, էշն ու մեքենան, *ովքեր* գտնվում էին հրապարակում, թըջվեցին նախադասության *լրագրողը*, էշն ու *մեքենան* լրացյալների դեպքում. չէ՞ որ վերջին երկուսը անձնանիշ չեն, ուստի նման կառույցը բացառվում է, և միակ հնարավոր տարբերակն է՝ Լրագրողը, էշն ու մեքենան, *որ (որոնք)* գտնվում էին հրապարակում, թըջվեցին կաղապարը: Հմմտ. Միայն *Հայրոն ու շունն էին*, որ դեռ չէին քնել (ԴԴ): *Մարդը, ընկերը, գազանը, աշխարհիկ կյանքը, որոնց* ինքը բանի տեղ չէր դնում, այժմ դառնում են առանձնահատուկ կարևոր (ԴԴ):

Համանման են այն դեպքերը, երբ գոյական(ներ)ը կունենա(ն) ոչ անձնանիշ (իրանիշ) բացահայտյալ, օրինակ՝ Այնուիետս գալիս էին *Դարվիճը, Հյոքսլին, Տինդալը*՝ անգլիացի մտածողների մի ամբողջ *համաստեղություն*, որոնք հաստատում էին այլ մտածողների սկզբնական եզրակացությունները (Թ. Դրայգեր, Հանճարը):

Ի դեպ, ոչ անձնանիշ (իրանիշ) գոյականներն էլ կարող են ունենալ անձնանիշ բացահայտիչներ, օրինակ՝ *Շո՛ւն*, կարոտի՛ իմ *եղբայր*, դառնաթախիծ իմ *ընկեր* (ԵԶ):

6. Լրացյալի դերում կարող են լինել բառեր (այդ թվում՝ դերանուններ), որոնք կարող են՝ ա) վերաբերել թե՛ անձնանիշ, թե՛ ոչ անձնանիշ (իրանիշ) գոյականների, ինչպես՝ *խումբ, պատկեր, կերպարանք, ամենը, յուրաքանչյուր(ը), բոլորը, սա, դա* և այլն, բ) ունենալ խոսքիմասային երկվություն (լինել և՛ գոյական, և՛ ածական), ինչպես՝ *զույգ, քրիստոնյա, հանգուցյալ*, գ) գործածվել փոխանվանաբար (այդ թվում և ինքնանվանողական փոխանունությամբ) և նույնպես վերաբերել թե՛ անձերի, թե՛ իրերի, ինչպես՝ *առաջինը, նստածները, հեռացողները, մեկը, բախտավորները* և այլն, դ) ցույց տալ անձերի հավաքականություն, ինչպես՝ *ընտանիք, զորք, թիմ, կառավարություն* և այլն:

Եվ եթե որոշիչ երկրորդականների անձնանիշ լրացյալներին կապակցումը *ով* դերանվամբ ճիշտ ու պարտադիր համարվի, ապա երկրորդականի կապակցման միջոցի ընտրությունը վերոբերյալ դեպքերում կվերաժվի մղձավանջի, մանավանդ եթե լրացյալի «անձնանիշ» / «ոչ անձնանիշ» տարբերակումը լինի անհնարին: Հմմտ. Նրա հայացքը կանգ առավ օթյակներից մեկի վրա և տեսավ ուրիշ *կերպարանք*, որին մի քանի րոպե մոռացել էր (Շ): Արեգակը դեռ չի տեսել այն *բախտավորին*, որ գտած լինի մի այդպիսի գաղտնապահ ընկեր (ԱԻ): Ո՞վ է այն *ստրահակը*, որ հանդգնում է ինձ մենամարտի կանչել (ԱԻ): Դու կլինես ամենահաղթ *քաջը*, որ տիրել է իր լեզվին (ԱԻ): Բոլորը վեր

նայեցին ու տեսան մարդկային մի *դեմք*, որ բռնել էր ողջ լուսամուտը (ԱԻ): Համեստ կյանք ունեւ նա իր հոյակապ պահեստներում ու ճոխ սեղան ու ապաստան [էր տալիս] ամեն *աղքատների* ու *ուխտավորների* համար, որ տարին բոլոր դեգերում էին Գանգայի սրբազան ափերի ու Հիմալայի նվիրական անտառների միջև (ԱԻ): Մի *պատկեր* կար, որ երևակայության մեջ ամբողջացնում էր նա. դա նրա կիրքն էր, որ նրան սարսափեցնում էր ու ուրախացնում (ԴԴ): Կա՞ր արդյոք մի *արարած*, որ չտանջվի մարմնական ցավից, չվախենա մահից և իրավունք չունենա ապրելու (ԴԴ): Հրապարակից քշվում էին *մեռելները*՝ այդ խստապահանջ անհոգ *էակները*, որ հրամայել են ու հրամանը միշտ կատարած տեսնել գիտեն (ԴԴ): Քաղաքում կային *խմբեր*, որ թաղերը բաժանել էին ազդեցության գոտիների (ԴԴ): *Ջոյգը*, որ բնակվում էր Միլանում, օգոստոսի կեսերին հանգստի էր մեկնել (Մամուլ): Ուրախ են նաև նրանց *սրվերները*, որ ահա թռչկոտում, պարում են սևացած պատերի վրա (ԴԴ): *Վարդը*, որ հագավ ծիրանին, Քրիստոսն էր, որ հարություն առավ, ծաղկունքը, որ թառամեցին, դեղնեցին, զինվորներն էին, որ փախան նրա գերեզմանից (ԴԴ): Երբ Արշակունյաց ցեղը վերացավ, Հայոց աշխարհին տիրեց Սասանի ցեղը, որ իր իշխանությունը վարում էր մոգերի կրոնի համաձայն (Եղիշե): Հովսեփը գնաց ուրիշ քաղաք՝ ազատվելու այն *շրջապատից*, որ նրան միշտ հիշեցնում էր կատարված ահավոր տրագեդիան (ՎԹ): Եւ ծնաւ Արամանեակ ուստերս և դստերս բազում, *յորոյ* անդրանիկն Արամայիս (Սեբեոս, 6): Ավելացրեց *երկրորդը*, որ ուշադիր գծագրին էր նայում (Ան. Սեկոյան): Բացառություն է *կին* -ը, որի հոգնակին է *կանայք* և այլն:

Եվ, բնականաբար, սխալ են կազմված այն նախադասությունները, որոնցում որոշիչ երկրորդականը վերոբերյալ խմբերի լրացյալներին կապակցվում է *ով* դերանվամբ, ինչպես՝ Ողջ *թիմը*, *ովքեր* մասնակցում էին առաջնությանը, որակազրկվեց (Մամուլ): Ռուսաստանը, Վրաստանը, ասենք, ու մյուս *երկրները*, *ովքեր* ունեն ծով (Մամուլ) և այլն:

7. Հայտնի է, որ հայերենի գոյականները հայցական հոլովում կարող են հանդես գալ լրացուցիչ առումներով, այն է՝ իրանիշ գոյականները անձի առումով, անձնանիշները՝ իրի: Եվ եթե բացարձակացվի էլ անձնանշությունը, ուրեմն և անձի առումով հանդես եկած իրանիշ գոյականները ևս պետք է ստանան *ով* դերանվամբ կապակցված որոշիչ երկրորդական, մի բան, որ նույնպես կառաջացնի լրացուցիչ դժվարություններ: Հմմտ. Նա խնամում է թռչուններ, *որոնք* (*ովքեր*) ապրում էին շրջակայքում: Նման դեպքերում *որ* դերանվամբ կապակցումը

հնարավորություն է տալիս չծանրաբեռնելու գրողին (խոսողին) և հարթելու հնարավոր հակասությունները:

8. Եթե անձնանշության և իրանշության տարբերությունները քննարկվող հարցում խիստ կարևորվեն, ուրեմն իրանիշ գոյականների համար պետք է պահանջել միայն *ինչ* դերանունով կապակցություն: Սակայն դա այդպես չէ, և իրանիշ լրացյալների համար երկրորդականների կապակցման միջոց է կիրառվում *որ* դերանունը, օրինակ՝ Հայ առաքելական եկեղեցում հոգեգալստյան շարականներն են «Առաքելս աղաւնոյ», «Երրորդություն անբաժանելի», *որ* երգվում են միշտ: Եվ կահավորել այն տունը գուցե, *որ* Քաղսովետից չենք էլ ստացել: Եվ չհավանել այն վարագույրդ, *որ* չի նվիրել դեռ մորաքույրդ: Տեսնել այն շորդ, *որ* դեռ չես կարել, Հուզվել այն երգից, *որ* դեռ չեն գրել (ՊՍ):

А. М. Сантоян- Замечание об определительном второстепенном предложении, связанное с местоимением *ով* ([ov] ‘кто’). В армянском языке в последнее время необоснованно развивается языковая модель, когда придаточно-определятельное второстепенное предложение соединяется с главным при помощи местоимения *ով* ([ov] ‘что’) в ситуации, когда определяемое слово является существительное с субъектной номинацией. Например: *Սա է մեկ մարդ, որ բերեց ոսկի.* Это обусловлено влиянием английского языка, в котором второстепенное предложение присоединяется к определяемому слову с субъектной номинацией именно с помощью местоимения *ով* ([ov] ‘что’). Ср.: *The two sisters lust for Edmund, who has made promises to both (William Shakespeare, King Lear).*

Эта языковая модель (которая сформировалась в печати и постепенно проникает в научную и художественную литературу) является чуждой для армянского языка и неприемлема по следующим причинам (но не по той причине, что армянский язык не в состоянии воспринимать ничего нового):

1. Начиная с V века (с переводов Библии и произведений армянских историков), в литературном армянском языке придаточно-определятельные предложения соединяются с существительным-определяемым словом местоимением *որ* ([or] ‘который’).

2. В армянском языке субъективная и объективная номинации определяемого слова не имеют значения и несущественны: местоимение *որ* ([or] ‘который’) является универсальным и дает возможность

присоединять второстепенные члены со следующими определяемыми словами:

а) с личными местоимениями: *Мы, которые родились людьми от матери...*; б) со словами, которые соотносятся как со субъектами, так и с объектами: *все, один, образ, облик, создание, сидящие, первый* и т.д.; в) со словами, которые указывают на собирательность субъектов (и, разумеется, не имеют субъектную номинацию): *войско, отряд, курс, правительство* и т.д.; г) с теми многочисленными существительными (как с объектной номинацией, так и с субъектной), которые имеют общие второстепенные члены: *Только Айро и собака, которые до сих пор не спали...*

3. Местоимение *նի* («что») не приобретает артикля и не склоняется во множественном числе, что создает дополнительные трудности в согласовании и управлении.

A. M. Santoyan - A remark on a determinative secondary sentence related to the pronoun *նի* ([ov] 'who'). The linguistic pattern that has recently started to ungroundedly occupy its place in Armenian language is the one having the relative clause joined to the main clause by means of the relative pronoun *նի* ([ov] 'who') in cases when the antecedent (the modified word) is a personal noun. E.g. That was the man who/that brought the gold. This is definitely the direct influence of English language in which both restrictive and non-restrictive relative clauses may be joined to person-identifying antecedent by means of the relative pronoun 'who', for the latter case 'who' being a mandatory use. Compare: The two sisters lust foe Edmund, who has made promises to both (*William Shakespeare*, *King Lear*).

The above mentioned linguistic pattern (which has been developed in mass media and has gradually been penetrating into scientific literature and fiction) is alien for Armenian language; hence, is unacceptable for the reasons mentioned below (but this is definitely not the case that Armenian is incapable of adopting anything new).

1. Since the 5th century (from the translations of the Bible and works by Armenian historians) literary Armenian has acknowledged a rule whereby the relative clause is joined to the noun antecedent by means of the relative pronoun 'who'.

2. The human and non-human nature of the antecedent is not of any importance in Armenian: the pronoun 'that' is universal and makes it feasible to join relative clauses to the following antecedents:

a) personal pronouns: We, that were born human by a mother; b) words related to both person-identifying and object-identifying notions (including metonymy): everyone/everybody, one, image, countenance/appearance, creature, the first (one), etc.; c) words denoting collectivity - groups of people (that are surely not person-identifying nouns): army, detachment, group, government; d) multiple-components (both person-identifying and object-identifying) that share the same subsidiary member: It was only Hayro and the dog that were not sleeping yet.

3. The pronoun 'who' does not take an article and does not have a plural form, which causes additional difficulties in terms of agreement and transitivity.